ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ
HOVHANNES ZATIKYAN

ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1950-1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հետպատերազմյան իրադարձությունները, նախկին դաշնակիցների սառը հակամարտությունները թեև խոչընդոտներ էին ստեղծում թե Հայկական հարցի լուծման, թե հայրենադարձության ճանապարհին, սակայն վերջին գործընթացը իր բազմաթիվ պակասություններով հանդերձ շրջադարձային դեր խաղաց սփյուռքահայության դեպի հայրենիք ունեցած վերաբերմունքի ասպարեզում: Հայության ստվար զանգվածների այն հատվածը, որ դրական էր գնահատում հայրենիք-սփյուռք հարաբերությունների վիճակը, թեև ուներ մտավախություններ, սակայն կշռադատելով ստեղծված կացությունը, հայրենիքը համարում էր վերջին հանգրվան, այն միակ անկյունը, ուր կարող էր անկաշկանդ ապահովել իր գոյությունը:

Սա պետք է համարել հայության բեկորներին այնքան մեծ տառապանք պատճառած հայրենադարձության գործընթացի նվաճումը, որը հետագայում երաշխիք էր դառնալու Հայկական հարցի վերաբացման ճանապարհին:

Մինչև Ստալինի մահը, ԽՍՀՄ-ում իրականացվում էր ցավագին, մարդկային կորուստներով, աքսորով ու հալածանքներով հագեցած քաղաքականություն: Ամբողջ երկրում տիրում էր սարսափի ու վախի մթնոլորտը: Բարոյահոգեբանական կացությունը օր-օրի անկում էր ապրում: Միայն 1947թ. հանրապետությունում փոխվեցին կուսակցության և գործադիր մարմինների 137 վերադաս մարմինների աշխատողներ[1]:

Ամբողջատիրական համակարգը, որ սեփական ժողովրդի նկատմամբ անվստահության ապացույցն էր, իր ձեռքում էր կենտրոնացրել քաղաքական ու տնտեսական ամբողջ ոլորտը: Կազմակերպվող ընտրությունները կրում էին ձևական բնույթ: Հատկապես գործունյա էր պատժիչ համակարգը: Նրա ուշադրությունը բևեռված էր հատկապես ազգային հանրապետությունների և առանձնապես հայկական ընդվզումների վրա: Կուսակցական վերահսկողության հետ միասին ՊԱԿ-ը անդուլ հսկողության տակ էր պահում ազգային մտածողություն ունեցող, Հայկական հարցի լուծմամբ մտահոգ մարդկանց: ՍՄԿԿ կենտկոմի որոշումների, նամակների քննարկումները դարձել էին քաղաքական մթնոլորտի անբաժան մասը: Կուսակցական ժողովները, քննար-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 100, թ. 66-68:

կումները առիթներ էին ստեղծում նոր հալածանքների ու բռնադատումների համար: Առավել հետևողականություն դրսևորելով, ազգային մտածողություն կրողների նկատմամբ, հալածանքների տարափի տակ էին հայտնվում նշանավոր գիտնականներ, դերասաններ, նույնիսկ կատակասերներ: Վերադաս մարմինները վերլուծում և գնահատում էին պատմական, բանասիրական բնույթի գիտական աշխատություններ հայ ժողովրդի ազատագրական պայքարը գնահատելով որպես հայ բուրժուազիայի շահերի արտահայտություն: Հայ մտավորականության դեմ պայքարը գնալով նոր թափ էր ստանում: Եթե պատերազմի տարիներին քաղաքական մեղադրանքներով դատապարտվեցին 5200, գնդակահարվեցին շուրջ 500 մարդ[2], ապա 1945-1952 թթ. նույն մեղադրանքներով բռնադատվեց 2496 մարդ: Նրանցից հակահեղափոխական էին 560 մարդ:

1945-1953 թթ. աչքի էին ընկնում նաև զանգվածային աքսորով: 1947-1949 թթ. ձերբակալվեցին և 25 տարվա ազատազրկման դատապարտվեցին Հայկական լեգեոնի 50 մարտիկներ, անգամ նրանք, ովքեր փախչելով լեգեոնից, մասնակցել էին պարտիզանական պայքարին, արժանանալով ֆրանսիական շքանշանների և մեդալների[3]:

1949թ. հունիսի 14-ին կազմակերպված գործողության արդյունքում, որը Ստալինի հրահանգի կատարումն էր, մեկ օրում Հայաստանից աքսորվեցին, տարբեր տվյալներով 13272[4], 14000[5] և 12316 մարդ, ընտանիքի անդամները ներառյալ[6]: ԽՍՀՄ ներքին քաղաքականության հարվածներից չխուսափեց նաև հայ եկեղեցին, մշակման գործընթաց բերվեց եկեղեցու սահմանադրությունը: 1955թ. սեպտեմբերի 29-30 Հայոց հայրապետ ընտրվեց Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Հոկտեմբերի 2-ին նորընտիր կաթողիկոսը օծվեց:

Կենտրոնական կառավարության հրահանգներով, ամբողջ երկրում տարվում էր ազգաբնակչության աթեիստական դաստիարակություն, ուսուցում: Հայ եկեղեցին, որ պատերազմի տարիներին մեծ հեղինակություն էր ձեռք բերել թե սփյուռքում, թե Խորհրդային Հայաստանում, պատերազմի ավարտից հետո հայտնվեց շրջափակված վիճակում, աթեիստների հարձակման կիզակետում:

Ստալինի մահից հետո էլ ԽՍՀՄ-ում տիրող բարոյա-քաղաքական վիճակը չէր բարելավվում, հասարակական առողջացման տեմպերը հեռու էին

---

[2] Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, Ե., 1999, էջ 219-220:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 62, գ. 2310, թ. 1, գ. 5756, թ. 1:
[4] Մանուկյան Ա., նշ. գիրքը, էջ 231:
[5] ՀՀ ՀՔԿՓ, ֆ. 1, ց. 34, գ. 61, թ. 147:
[6] Նույն տեղում, ց. 36, գ. 52, թ. 43:

բավարար լինելուց: Բերիայի ձերբակալությունից հետո թվում էր, թե իրադրությունը երկրում կբարելավվի: Նրա դատապարտումից ու գնդակահարությունից հետո, 1954թ. կուսակցական հետապնդման ու աշխատանքից ազատման ենթարկվեց ԿԿ առաջին քարտուղար Գր. Հարությունյանը, ԿԿ նոր առաջին քարտուղար ընտրվեց Ս. Թովմասյանը:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանի հանրապետությունում աշխատանքներ էին տարվում ստալինիզմի հետևանքների վերացման համար: Բնական է, որ հանրապետության ղեկավարության ուշադրությունից դուրս էր մնալու Հայկական հարցը բարձրացնելու խնդիրը: Խրուշչովյան բարեփոխումները, սակայն արդյունավետության տեսանկյունից թերի էին, երկարաժամկետ, մինչդեռ երկիրը զգում էր շուտափույթ բարենորոգումների անհրաժեշտությունը: ԽՍՀՄ վարած ազգային քաղաքականությունը ծանր հետևանքներ էր բաժին հանել հայությանը: Օգտվելով փոքր ի շատե բարվոք վիճակից, հայրենասիրական ուժերը ձեռնարկում էին վերադասավորման, համախմբման, կազմակերպական նոր որակներ ապահովելու միջոցառումներ: Խրուշչովյան ձնհալը բարձրագոչ սկզբունքներ հանրահռչակելուն զուգընթաց խստացնում էր անզիջում գաղափարական պայքարը, փորձելով խորհրդային քաղաքացիներին հեռու պահել վնասակար քարոզչության ազդեցությունից: Փակվում և խլացվում էին արտերկրից եկող ռադիոկայանների ձայները: Օր-օրի խստացող հետապնդումները, սակայն, անկարող էին լռեցնել ստալինյան ազգային քաղաքականության սրբագրումը պահանջող առաջադեմ երիտասարդության ձայնը: Հանրապետությունում խիստ գաղտնի պայմաններում ծավալվում էին կազմակերպական աշխատանքներ, ձևավորվում էին գաղտնի խմբակներ, որոնք գործելով ընդհատակում, նպաստում էին ազգային գիտակցության արթնացմանը: Հայաստանի ՊԱԿ-ը լրտեսական խիտ ցանց էր ստեղծել, որի արդյունքում 1965-1975թթ., խուլիգանության, կաշառակերության, խաբեբայության և այլ սարքովի մեղադրանքներով ազատազրկման վայրեր ուղարկեց հայրենասեր շատ գործիչների:

Հայ ժողովրդի ազատագրական արդար պայքարին իրենց աջակցությունը հայտնեցին մի շարք երկրների առաջադեմ գործիչներ: Նրանք կազմակերպում էին հայամետ գործողություններ, որոնք արձագանքվում էին միջազգային կազմակերպությունների կողմից:

Հայկական հարցը նոր փակուղի մտցնելու գործընթացում կարևոր դերակատարում ունեցավ ԽՍՀՄ-ը: 1953թ. մայիսի 30-ին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ.Մոլոտովը հայտարարեց, որ իր երկիրը Թուրքիայից հողային

պահանջներ չունի: Շարունակելով դիվանագիտական թաքստոցներ կառուցելու իր քաղաքականությունը, ԽՍՀՄ-ը ոտնահարելով հայ ժողովրդի իրավունքները, շարունակելով հայության պատմական հայրենիքի վաճառքի քաղաքականությունը, ուղիներ էր փնտրում Թուրքիային իր ազդեցության տակ գցելու համար, ցանկանալով նրան հեռու պահել ՆԱՏՕ-ի մեջ մտնելու մտքից, զգուշացնելով հիշյալ բլոկին մասնակցելու հետևանքների առթիվ: Ստալինի մահից հետո, նույն քաղաքականությունը շարունակվեց և 1956թ. նոյեմբերի 4-ին, Ն.Խրուշչովը մեկ անգամ ևս հիշեցրեց, որ ԽՍՀՄ-ը հողային պահանջներ չունի Թուրքիայից, որ վրացական պահանջների կնքահայրը Բերիան էր, որ նրա մահով էլ մոռացվեցին նման հարցադրումները:

Չնայած նրան, որ Խորհրդային Միությունն արմատապես փոխեց Թուրքիայի հանդեպ իր դիրքորոշումը, թուրքական իշխանությունները դեռ երկար ժամանակ չէին պատասխանում հարաբերությունները կարգավորելու Մոսկվայի ձգտմանը: 1955թ. փետրվարին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանում իր ներկայացրած զեկույցում ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Մոլոտովը նշում էր, որ ի պատասխան Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու Սովետական Միության ձգտումներին, այդ երկրի իշխանությունները «շարունակում են հաստատուն մնալ իրենց դիրքորոշումներում, որոնք չէին համապատասխանում նորմալ բարիդրացիական հարաբերություններին՝ իրենց տարածքներն ու առափնյա ջրային տարածքները դարձնելով ռազմական գործողությունների և արտասահմանյան, հատկապես ամերիկյան զինված ուժերի ցույցի մի ասպարեզ»[7]: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1957թ. Փետրվարյան նստաշրջանում Վրացական ՍՍՀ-ից մի պատգամավոր հայտարարեց, Խորհրդային Միության և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնումը նախևառաջ համապատասխանում է Թուրքիայի շահերին, որը ԽՍՀՄ-ի հետ բարեկամության քաղաքականությունից Թուրքիան անհամեմատ ավելի շատ բան կշահի, քան իր տարածքները արտասահմանյան ռազմաբազաներին տրամադրելուց: Թեև 1965թ. Նոյեմբերից թուրքական կառավարությունը ծրագրում էր Խորհրդային Միության հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ցանկության մասին, սակայն պատասխանելով ամերիկյան ռազմաբազաների մասին մեջլիսի պատգամավորների հարցերին, վարչապետ Սուլեյման Դեմիրելը

[7] Армения и советско-турецкие отношения в дипломотических документах 1945-1946 гг, Под редакции Армана Киракосяана, Хацнохалный архив Армении, Ереван, 2010, стр. 47.

հայտարարեց, որ դրանք ստեղծվել են պաշտպանական նպատակներով, «Թուրքիայի վրա կումունիստական հարձակումը» կանխելու համար[8]:

Մինչ 1991թ. ԽՍՀՄ փլուզումը, «խաղաղ գոյակցության» սովետական արտաքին քաղաքականության սկզբունքների շրջանակներում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունների կայունացմանը նպաստելու ուղղությամբ ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ալեքսեյ Կոսիգինը՝ 1966թ. դեկտեմբերին այցելեց Թուրքիա, ապա հետևեց Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի՝ 1967թ. սեպտեմբերին ԽՍՀՄ կատարած այցը: Այն այցելությունների արդյունքում ընդունվեց հայտարարություն, որով կողմերը հաստատեցին Լենինի և Քեմալի ժամանակ ծնված բարեկամությունը, պարտավորվեցին շարունակել ընկերական, բարիդրացիական հարաբերությունները, հասնել փոխադարձ վստահության, միմյանց արտաքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականությունը հարգելու սկզբունքների հիման վրա: Այնուհետև ծավալվեց ակտիվ քաղաքական երկխոսություն, և աշխուժացան առևտրա-տնտեսական հարաբերությունները, հաստատվեց պետական սահմանի վերագծման արձանագրությունը, որի հիմքերը 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերն էին[9]: Եթե 1946թ. Հայաստանի Կենտկոմի Կոմկուսի առաջին քարտուղարը կարող էր բացահայտ հանդես գալ, և պահանջել «հայկական հողերը իրենց իրական տիրոջը վերադարձնելու մասին», ապա 1953թ. սովետական կառավարության հայտնի հայտարարությունից հետո, հանրապետությունում փաստորեն արգելվեց նմանատիպ հայտարարությունների հրապարակումը: Հատկապես հսկողություն սահմանվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, Ցեղասպանության և այլ հարցերին վերաբերող գիտական հետազոտությունների նկատմամբ:

Խրուշչովյան «ձնհալի» տարիները հնարավորություն տվեցին բարձրացնել Հայկական հարցը: Հայաստանից խլված տարածքների հարցը դարձավ հայ առաջավոր մտավորականության պահանջի հիմնական թեման: Նորից օրակարգ բերվեց Արցախյան խնդիրը: Սպասվում էր, որ 1961թ. Հայաստան կատարվելիք այցի ժամանակ Ն. Խրուշչովի առաջ կբարձրացվի Հայկական հարցը: Սակայն, ինչպես Խորհրդային մյուս ղեկավարները, Ն. Խրուշչովը նույնպես արտահայտեց այն միտքը, թե ԽՍՀՄ-ում ազգային հարցերը լուծված են: Խնդրին նման մոտեցումը Հայկական հարցը նորից մղում էր անբարեհույս վախճանի: Սակայն համայնավարական երկրում փորձելով խեղդել ազգային

---

[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 47.

մտածողությունը, կոմունիստական վարչակարգը անկարող էր լռեցնել աշխարհասփյուռ հայության ձայնը: Այդ առթիվ կանխատեսելով վտանգավոր զարգացումներ, խորհրդային վարչակարգը նախաձեռնեց սփյուռքահայության տարանջատման գործընթացը, որի իրականացման նպատակով էլ կազմվեց «Սփյուռքահայության հետ Մշակութային Կապի Կոմիտեն», աշխատանքներ էին տարվում հայ եկեղեցու պառակտման ուղղությամբ, որպեսզի հայությանը զրկեին ընդհանուր պայքարի հնարավորությունից: ՊԱԿ-ի գործակալների բեղուն գործունեությունը տվեց ցանկալի պտուղներ: Հայ եկեղեցին պառակտվեց, սփյուռքի հասարակական-քաղաքական ընդհանրությունը իր տեղը զիջեց անջատ-անջատ, իրար նկատմամբ անվստահությամբ լցված կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեության:

Հալածանքներին ու հետապնդումների պայմաններում հայրենասիրական գործունեության ծավալման համար անհրաժեշտ էր պայքարին տալ կազմակերպված բնույթ, բացառել հակասահմանադրական ելույթները: 1962թ. գործող գաղտնի խմբերը քարոզչական մեծ աշխատանք տարան ազգային գիտակցության զարթոնքն ապահովելու գործում: Նրանց տարածած ձեռագիր ու խմորատիպ, լուսանկարային տարբերակներով բազմացրած թռուցիկները մեծ տարածում էին ստանում: ՊԱԿ-ը, թեև մեծ աշխատանք էր տանում ակտիվ գործիչներին ասպարեզից վերացնելու գործում, սակայն նրանց փոխարինելու էին գալիս նորերը: Հատկապես ուսանողությունը մեծ համակրանք էր տածում հայրենասիրական խմբակների գործունեության նկատմամբ: Գնալով ինտաստազրկվում էին ինտերնացիոնալիզմի ու եղբայրության կարգախոսները: Ժողովուրդն արդեն հստակ պատկերացում ուներ իր գերխնդրի նկատմամբ իրականացված դավադրությունների մասին: Մերձբալթիկայում, Ուկրաինայում արդեն բացահայտ պահանջներ էր դրվում վերականգնել ժողովուրդների իրավահավասարությունը, լուծում տալ ազգային խնդիրներին, վերճշգրտել սահմանները, ընդլայնել ազգային հանրապետությունների իրավունքները, պաշտպանել ազգային լեզուն և բազմաթիվ այլ խնդիրներ:

Ազգային զարթոնքի ապահովման գործում անգնահատելի դեր խաղացին հայ գրողները, մշակույթի գործիչները: 1959թ. լույս տեսավ Պ.Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը, շուրթից-շուրթ էին փոխանցվում Հովհ. Շիրազի անտիպ, հայրենասիրական բանաստեղծությունները:

Բարձրանում էր ժողովրդի քաղաքական գիտակցությունը, ճանաչելի էր դառնում պատմական հայրենիք կորստի հարցում միջազգային ուժերի ու բոլշևիկյան վարչակարգի հակահայ քաղաքականության արդյունքները:

1964թ. տարածված թռուցիկներից մեկում ասված էր.«Հայեր, բավ է միայն մտածել ու հուզվել, պետք է բողոքել, պայքարել: Համայն ուժերով պահանջեցեք Զավախքը, Ղարաբաղն ու Նախիջևանը: Պահանջեցեք և դուք Ախալքալաքի հայեր, մի թողեք հայոց հողերը օտարի ձեռքում:

Հավերժացրեք Ձեր նախնիների հիշատակը:

Միացեք մայր Հայաստանին»[10]:

Ազգային զարթոնքի անմիջական արդյունքն էր 1965թ. ապրիլի 24-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքում Մեծ Եղեռնի 50-ամյակի պետական միջոցառման կազմակերպումը, որը վերածվեց աննախադեպ ցույցի: Ցուցարարները վանկարկելով՝ «Հողերը, հողերը» բառերը, հաղթահարելով ՊԱԿ-ի և ոստիկանության դիմադրությունը խուժեցին թատրոնի շենք ու ներկայացրին համայն հայության արդար պահանջները՝ պաշտոնապես. դատապարտել Ցեղասպանությունը և տեր կանգնել հայության իրավունքներին: Ցույցը, Կոմունիստական բռնատիրության գոյության պայմաններում խոշոր իրադարձություն էր: «Հայաստանի վերամիավորման շարժման կենտրոնական խորհուրդը» հանդես եկավ ընդարձակ վերլուծականով: Երեք էջանոց այդ փաստաթուղթը՝ «Կոչ բոլոր Հայրենասեր հայերին», «Պայքարը պետք է շարունակվի» կարգախոսով գնահատական էր տրվում 1965թ. ապրիլի 24-ի ցույցին և ընդգծում հետագա անելիքները: Անդրադարձ կատարելով Հայկական հարցի անցած ուղուն, նշելով հայության իրավունքների ոտնահարման բոլոր փորձերը, վերլուծելով Հայկական հարցի նկատմամբ ԽՍՀՄ վարած քաղաքականությունը, փաստաթուղթը արձանագրում էր, որ «...Հայկական հարցը ընդհանրապես չի ստացել իր լուծումը, ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ ՍՍՌՄ սահմաններում: Հայ ժողովուրդը երբեք չի կարող անտեսել պատմական այս մեծ անարդարությունը և չի կարող հաշտվել ներկա վիճակի հետ: Ապրիլի 24-ը առաջին անգամ կոտրեց լռության սառույցը և դրեց Հայկական հարցի լուծման համաժողովրդական պայքարի սկիզբը: Այդ պայքարը պետք է շարունակվի, և այնքան ժամանակ,

---

[10] Անձնական արխիվ, թղթ. 1, էջ 1:

քանի դեռ արդարացի ու վերջնական լուծում չի ստացել Հայաստանի ու Հայ ժողովրդի վերամիավորման հարցը»:

Այնուհետև փաստաթուղթը Հայկական հարցի լուծման գործում վճռական դեր վերապահելով հայ ժողովրդին, կոչ էր անում հայության ձայնը հասցնել «աշխարհի բախտը տնօրինող մեծ տերությունների ականջին...ազդարարենք ամբողջ աշխարհին, թե մենք չենք հաշտվել ու երբեք չենք հաշտվելու Հայաստանի ու Հայ ժողովրդի մասնատված վիճակի հետ», «...Հայկական հարցը օրակարգից երբեք չպետք է հանվի: Նրա լուծման համար մենք պետք է պայքարենք ամեն օր, ամեն ժամ, տարբեր ձևերով ու միջոցներով...»[11]:

Փաստաթուղթ-թռուցիկը, հիշեցնելով թե ԽՍՀՄ-ում ինչ լուծում է ստացել Հայկական հարցը, պահանջում էր իրականացնել ինքնորոշման իրավունքը և Վրաստանին ու Ադրբեջանին բռնակցված հայկական հողերը միավորել մայր Հայրենիքին, միջազգային ասպարեզում՝ վեր հանել երիտթուրքական արյունոտ քաղաքականությունը և պահանջել պատմական հայրենիքի ազատագրությունը: «Ապրիլի 24-ը,- շարունակում է թռուցիկը,- նշվեց ոչ իբրև սոսկ 50-ամյակ, այլ իբրև շարժման մի նոր էտապի սկիզբ: 51-ամյակը պետք է նշվի ավելի մեծ մասշտաբներով, քան 50-ամյակը: Ապրիլի 24-ը պետք է դառնա հայ ժողովրդի տրադիցիոն օր, նրա արդարացի բողոքի ու պահանջի օր»[12]:

Շարունակելով իր ազգային քարոզչությունը, ՀԴԸ ծածկագրով (թերևս Հայ Դատի Ընկերություն- Հ. Զ) թռուցիկը դիմելով հայ ժողովրդին կոչ էր անում շարունակել սկսված հայրենանվեր գործը. «Համագումարի նախօրյակին (խոսքը ՀԿԿ 24-րդ համագումարի մասին է- Հ. Զ.) մարտի 27-ին, ժամը 11-ին, համագումարին և խորհրդային կառավարությանը նվիրված ողջույնի լոզունգներով ու առաջնորդների նկարներով դուրս գանք ցույցի և պահանջենք Ղարաբաղն ու Նախիջևանը միացնել Հայաստանին»[13]:

Հայ ժողովրդի անունից ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյին ուղղված «Բաց Նամակ» փաստաթուղթը դատապարտելով խորհրդային կառավարության նախագահի 1966թ. դեկտեմբերի 20-ին Անկարայում արված հայտարարությունը, ավելացնում էր. «Հայտնի է, որ Հայաստանի տերիտորիայի մեծ մասը ժամանակավորապես գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ: Այդ

---

[11] Նույն տեղում, էջ 2:
[12] Նույն տեղում, էջ 3:
[13] Նույն տեղում:

տերիտորիաների օրինական տերը հայ ժողովուրդն է և առանց նրա կարծիքը հաշվի առնելու ոչ-ոք իրավունք չունի նման հայտարարություն անելու:

ՍՍՀՄ-ը սուվերեն հանրապետությունների միություն է և նրա կառավարությունը պարտավոր է հավասար կերպով արտահայտել և պաշտպանել նրա կազմի մեջ մտնող սոցիալիստական հանրապետությունների և ազգերի շահերը: Մինչդեռ Ա.Ն.Կոսիգինի հայտարարությունը, որը արվել է առանց հայ ժողովրդի գիտության ու համաձայնության, հակասում է ողջ հայության ամենակենսական շահերին... Հայ ժողովուրդը լավ է գիտակցում, որ այսօր, ստեղծված միջազգային իրադրության պայմաններում հնարավոր չէ Հայկական հողերը առանց արյունի միացնել Սովետական Հայաստանին: Նա չի էլ պահանջում այդ: Սակայն դա իրավունք չի տալիս հրաժարվել այդ տերիտորիաներից: Բողոքելով Ա.Ն.Կոսիգինի Անկարայում կատարած քայլի դեմ, հայ ժողովուրդը գտնում է, որ Սովետական կառավարությունը իրավունք չունի առանց հայ ժողովրդի գիտության ու համաձայնության հանդես գալ այնպիսի հայտարարություններով, որոնք հակասում են նրա կենսական շահերին»[14]:

Ազգային ինքնագիտակցության վերընթաց ուղին, խորհրդային կառավարության Հայկական հարցի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը, Ազգային Միացյալ կուսակցության (ԱՄԿ) դեմ ծավալված հալածանքները, այլախոհ անվանումով նրա անդամների բռնադատումները չէին կարող ծառայել մոսկովյան վարչակարգի որդեգրած նպատակների իրագործմանը: ԱՄԿ-ի «Փարոս» և «Հանուն Հայրենիքի» թերթերը լայն տարածում էին ստանում երիտասարդության շրջանում, հայ ժողովրդի ստվար զանգվածների սեփականությունն էր դառնում ինչպես Մեծ եղեռնի հետ կապված մանրամասնությունները, այնպես էլ Հայկական հարցի նկատմամբ դարի առաջին քսանամյակում իրականացված դավադիր քաղաքականությունը:

1966թ. հուլիսին ԽՄԿԿ ԿԿ հասան 40.000 ստորագրությամբ Ղարաբաղցիների և հայ մտավորականության համախոսականները, որոնք պահանջում էին Ղարաբաղը միացնել մայր Հայրենիքին: Սակայն, եղբայրության նոր դաշինք կնքելով Ադրբեջանի հետ, կենտրոնը այս անգամ ևս անտեսեց հայ ժողովրդի արդար պահանջը: Դրան հակառակ ՊԱԿ-ը գործադրության ընդունեց ԱՄԿ-ն ոչնչացնելու ծրագիրը:

---

[14] **Նույն տեղում:**

Այդ միջոցառման արդյունքով Ստեփան Զատիկյանի, Հակոբ Ստեփանյանի, Զավեն Բաղդասարյանի նկատմամբ հարուցվեց շինծու մեղադրանք, որը ԱՄԿ-ն (Ազգային միացյալ կուսակցության) ոչնչացնելու ծրագրի ավարտական փուլն էր: Մոսկվայի մետրոյի կայարաններից մեկը իբր պայթեցնելու մեղադրանքով ձերբակալվածները 15 ամիս անց, փակ դատավարությամբ դատապարտվեցին մահապատժի, որը արագացված եղանակով, դատավճռից երկու օր անց հապճեպորեն ի կատար ածվեց:

1977թ. հունվարյան այս հաշվեհարդարը բուռն արձագանքի արժանացավ: Այլախոհ հայտարարված ակադեմիկոս Ա.Սախարովը 1990թ. Նյու Յորքում տպագրած «Հիշողություններ» գրքում տեղ գտավ «Զատիկյանի գործը» բաժինը, որտեղ կատարվածին գնահատական տալուց բացի, հայտնում էր նաև մի շարք մանրամասնություններ:

Changes in the totalitarian system of the USSR and the Armenian question in 1950-1960

The internal and foreign policy of the Bolshevist government cracked in 1917. However, using the encouragement of the "revolutionary" nation, Bolshevists slowly formed an authoritative regime where all the phenomena that could create danger, were suppressed. The years of Khrushchev's and Brezhnev's rule created conditions to make the central power formal. The fulfillment of serious changes became necessary.
Undertaking these works in the 80s, giving back to the nation a part of its rights which they had been deprived of, the representatives of Krushchev's ideology thought that with the help of new democratic criteria, they could eliminate the memories of past injustice. However, the opposite thing happened, and Armenians were also included in the nation-wide struggle, which was particularly evident almost in all national republics.